

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որբերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմխիթարները: Մխիթարէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք: Միայն անոնց ծառայէ, անոնց շո՛ւրջ դարձիր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք քաղցր խօսելով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանդ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քու ընդունելութեանդ հրաւերները եւ աղատներուն ու թըշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք (աղատները) նախագահեն ու անոնք ըլլան առաջինները: Անոնք թող նստին սեղանին վերջը եւ վարը: Միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանով եւ նամբո՛ւ դիր աղերսանով: Եթէ այսպէս հիւրընկալես, ոչ թէ տուած՝ այլ առած կ'ըլլաս, ոչ թէ ծախած՝ այլ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր, որ Քրիստոս կ'ըսէ. «Երբ հրաւեր կու տաս, հարուստները մի՛ կանչեր» որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղատները արհամարհուած չգգան եւ դուն, քու կողմնակալութեանդ պատճառաւ չդատապարտուիս որպէս օրինագանց մը նման անոր, որ կ'ըսէ. «Ան որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէք. պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղատներուն պիտի ըսէք. «Գնա՛՛ եւ սանդիխամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնաս, որովհետեւ հարուստները ընդունելով մեղք կը գործէին եւ դու իբրեւ օրինագանցներ կը մեղադրուիք օրէնքով:

Յովհան Մանդակունի Ճառեր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նկատի ունենալով, որ Մեծ Պահքի ընթացքին Ս. պատարագը փակ վարագոյրի ետեւ կը մատուցուի, Երեքշաբթի գիշերներու Ս. պատարագի մատուցումը պիտի դադարեցնենք Երեքշաբթի, 2 Մարտ 2019-էն սկսեալ

Ս. պատարագի մատուցումը պիտի վերսկսինք Երեքշաբթի գիշեր, 30 Ապրիլ 2019-ին, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ:

ԵՐԵՔՇԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին տեղի պիտի ունենայ 18-40 տարեկան երիտասարդ երիտասարդուհիներու ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում: Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 22 Յունուար 2019-ին: Կը հրաւիրենք հայ երիտասարդութիւնը հայ եկեղեցոյ հովանիին տակ համախմբուելու եւ Աստուծոյ խօսքով աճելու:

ԵՐԵՔՇԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ տեղի պիտի ունենայ բոլոր տարիքի հայորդիներուն համար, ծանօթացման ընկերային հաւաք, ապա ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում:

Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Արժ. Տ. Ղեւոնդ ՔՏԻ. Լօշ-խաճեան: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 5 Մարտ 2019-ին: Կը հրաւիրենք հայ ժողովուրդի զաւակները Աստուծոյ խօսքով աճելու:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 24 ՄԱՐՏ 2019

ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 56.1-57.21: Եփ. 4.17-5.14:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 16.1-31

Դ. Քառասնորդաց: ՏՆՏԵՍԻՆ

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով, թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիքն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել: Ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ, թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէք»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դո՞ւն որքան պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ ատելի ճարպիկ են քան՝ լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին»:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
56.1- -57.21**

*Տէրը այսպէս կ'ըսէ. «Իրաւունքը
յարգեցէ՛ք եւ արդարութիւն ըրէ՛ք, որով-
հետեւ ահա մօտեցաւ ժամանակը երբ
պիտի փրկեմ ձեզ, հասաւ ժամանակը
երբ պիտի ողորմիմ ձեզի:*

*Երանի այն մարդուն, որ արդարու-
թիւն կ'ընէ եւ իրաւունքը կը յարգէ, իմ
Շարաքներս կը պահէ եւ չի պղծեր գա-
նոնք, եւ կը դադրի անիրաւութիւն գոր-
ծելէ»:*

*Տիրոջ հաւատացած ունէ օտարագգի
թող չխորհի եւ չըսէ. «Տէրը զիս իր ժո-
ղովորդին մէջ պիտի չընդունի» եւ ունէ
ներքինի թող չմտածէ, ըսելով. «Ես ան-
պտուղ ծառ մըն եմ, Տէրը զիս չ'ընդու-
նիր»:*

*Տէրը այսպէս կ'ըսէ. «Այն ներքինի-
ները որոնք իմ Շարաքներս կը պահեն,
կ'ընտրեն այն բաները որոնք եւ կ'ուզեմ եւ
իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, իմ
տանս եւ իմ ժողովուրդիս մէջ աւելի լաւ
տեղ եւ պատիւ պիտի տամ անոնց, քան
իմ որդիներուս եւ դուստրերուս: Անոնց
պիտի տամ յաւիտեանական պատիւ մը, որ
բնաւ պիտի չջնջուի:*

*Իսկ այն օտարագգիները, որոնք ին-
ծի հաւատացին ինծի ծառայելու հա-
մար, եւ իմ անունս սիրեցին՝ ինծի ծա-
ռայ եւ աղախին ըլլալու համար եւ բոլոր
անոնք՝ որոնք իմ Շարաքներս կը պահեն
եւ չեն պղծեր, եւ իմ Ուխտիս հաւատա-
րիմ կը մնան, զանոնք իմ սուրբ լեռնս պի-
տի տանիմ եւ զիրենք պիտի ուրախա-
ցընեմ իմ աղօթքի տանս մէջ, պիտի ըն-
դունիմ իմ Սեղանիս վրայ իրենց մա-
տուցած ողջակէզներն ու զոհերը, որով-
հետեւ իմ տունս աղօթքի տուն պիտի
ըլլայ բոլոր հեթանոսներուն համար»:*

**Շարունակի եւ ամբողջացնի
Աստուածաշունչէն:**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԵՓԵՍՍՑԻՆԵՐՈՒՆ
4.17- -5.14**

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ
ձեզի. «Զըլլայ որ կրկին դառնաք այն
կենցաղին, որով հեթանոսները կ'ապ-
րին անմտօրէն: Անոնց միտքը խաւա-
րած է: Իրենց տգիտութեան եւ յամառ
անտարբերութեան պատճառով օտարա-
ցած են Աստուծոյ կեանքին եւ քանի
այդ կեանքին յոյսը չունին, իրենք
զիրենք անառակութեան տուած, ամէն
պղծութիւն կը գործեն անյագօրէն:
Բայց ես ձեզի սորվեցուցի, թէ այդ չէ՛
Քրիստոսի նամբան: Դուք լսեցիք իր
պատգամները եւ իրեն միանալով սոր-
վեցաք, թէ Յիսուսի մէջ է նշմար-
տութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին
ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին
պարելակերպը, որ խաբուսիկ ցանկու-
թիւններով ապականած էր, վերանո-
րագուեցէ՛ք հոգիով, ձեր մտածելա-
կերպը փոխելով եւ եղէ՛ք նոր մարդ մը,
Աստուծոյ պատկերին համաձայն ստեղ-
ծուած եւ ապրեցէ՛ք նշմարիտ կեանքը,
արդարութեամբ ու սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէն հրա-
ժարեցէ՛ք: «Ամէն մարդ նշմարու-
թիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս
կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիս-
տոսի միացած ըլլալով՝ իրարու ան-
դամներ ենք: Եւ, ինչպէս սաղմոսեր-
գուն կ'ըսէ. «Նոյնիսկ երբ բարկանաք՝
չըլլայ, որ մեղանչէք»: Եւ բարկացած
չմնաք միմեկի իրիկուն: Բնաւ առիթ մի՛
տաք Սատանային: Ով, որ գողութեամբ
կ'ապրէր թող այլեւս չգողնայ, այլ՝
վարժուի արդար վաստակով ո՛չ միայն
հացը շահելու, այլեւ՝ բարիք գործելու՝
օգնելով անոնց որոնք կարօտ են:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Յովհան Օձնեցի հայ եկեղեցւոյ
փառքերէն մէկն է: Ան կաթողիկոսական
աթոռ կը բարձրանայ (717-728) յաջոր-
դելով Եղիա Արմիշեցի կաթողիկոսին:

Ս. Յովհան Տաշիրք գաւառի Օձուն
գիւղէն է եւ աշակերտը՝ Թեոդորոս Քո-
թեմաւորին, որ իր ժամանակի ամէնէն
նշանաւոր աստուածաբաններէն եղած
է: Կ'ենթադրուի, թէ ան հելլենական
ուսումնարանի մը մէջ կրթուած էր:
Իրբեւ իմաստուն հովուապետ, իր կա-
թողիկոսութեան տարիներուն ընթաց-
քին հեռու կը մնայ յունասէր միտում-
ներէ, թէ՛ վարդապետական մարզին մէջ
եւ թէ՛ քաղաքական ուղղութեան վրայ:
Ան իր շնորհները լաւագոյնս կ'օգտա-
գործէ իր պաշտօնին բովանդակ տե-
ւողութեան ընթացքին եւ երկրին քա-
ղաքական պատեհութենէն օգտուելով՝
ազգային եկեղեցւոյ կազմակերպու-
թիւնը հաստատուն հիմքերու վրայ կը
դնէ: Իր այդ քաղաքականութեան առա-
ջին պտուղը կ'ըլլայ Էօմէր ամիրայե-
տէն խնդրել, որ քրիստոնեաները
չբռնադատուին իրենց հաւատքը փո-
խելու, եկեղեցիներէն հարկ չպահան-
ջուի եւ քրիստոնէական պաշտամունքը
ամէն տեղ ազատօրէն կատարուի:

Իր հայրապետութեան երկրորդ
տարին, Դուինի մէջ կը գումարէ եկե-
ղեցական ժողով մը, որուն ներկայ կը
գտնուին աւելի քան 30 եպիսկոպոս-
ներ:

Ժողովի ընթացքին կը խօսի իր նը-
շանաւոր ատենաբանութիւնը, որ կը
սկսի «Համբերողացն նախատիպ մեծն
Յովք» բառերով:

Այս ժողովին կը սահմանուին երե-
սուներկ կանոններ: Բացի այս կանոն-
ներէն, Օձնեցի Հայրապետ եկեղեցական
կանոններ կը հաւաքէ եւ կը կազմէ
առաջին հայ կանոնագիրքը, որ ժամա-
նակի ընթացքին հետզհետէ կը կատա-
րելագործուի: Ս. Յովհան Օձնեցի կը
յատկանշուի աղանդաւորներու դէմ իր
մղած պայքարով եւ այս տեսակետով
յաւէտ պիտի մնան իր «Ընդդէմ երե-
ւութեանաց» եւ «Ընդդէմ Պաղիկե-
անց» գառերը: Ան նաեւ ժամագիրքի
կարգաւորիչներէն մէկը եղած է, գրելով
«Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գիրքը,
«Աւագ Ուրբաք»-ի շարականները, «Մե-
ղաք յամենայնի» եւ ուրիշ գործեր:

Ս. Յովհան Օձնեցի իր կեանքի վեր-
ջին հանգրուանին Սոթեր լեռան վրայ
իր կառուցած եկեղեցւոյ մէջ նգնական
կեանքի կը նուիրուի «պահօք, աղօթիւք
եւ տփնութեամբ» եւ «խաչաչարչար
նգնութեամբ», իրեն ընկերակից ունե-
ցաւ Գեորգ Սփանչեպագործ եւ
Մատթէոս Խոտանարակ վարդապետ-
ները:

Ս. Յովհան Օձնեցի Հայրապետ կը
վախճանի 728-ին: Անոր բարձր իմաս-
տութեան եւ սրբութեան համբաւը միշտ
վառ կը մնայ յաջորդ սերունդներու
սրտին մէջ:

ՊԱՆԸԸ
*Պահքը միայն կերակուր ուտել չու-
տելը չէ, այլ՝ մեղքերու խափանումն է:
Պահք է սակաւախօսութիւնը, անըն-
չասիրութիւնը: Պահք են աչքերը պար-
կեշտացնելը՝ անամօք նայուածքներէ,
ականջները՝ անպատկառ խօսքերէ,
սիրտը՝ պիղծ խորհուրդներէ:*